րի»[102]*: Ի դէպ, իբրեւ վարկած, հնարաւոր է նաեւ մտածել, որ Հասանի աւագ որդի Վախտանգի մականունը՝* Տանգիկ *(*Թանգիկ*), կապուած է եղել, գուցէ, ոչ թէ իր անուան երկրորդ կէսի հետ՝* Վախ-*Տանգ-իկ (ինչպէս աւանդաբար ենթադրուել է մինչ այժմ*[103]*), այլ իր մօր անուան մի տարբերակի՝* Թագ*ուհի-**Թագ*իկ-*Թանգ*իկ:*

Կատարուած քննութիւնից յետոյ այլեւս որեւէ հիմք չի մնում՝ կասկածելու, որ միասնական Խաչէնի բաժանումն աւելի փոքր իշխանութիւնների (Ներքին Խաչէն, Վերին Խաչէն, Ծար եւ այլն) կապուած է եղել, իրօք, 1182 թուականին Հասան Մեծի՝ կրօնաւոր դառնալու, այլ ոչ թէ դրան նախորդած ինչ-որ անորոշ ժամանակի *ու* անորոշ հանգամանքների *հետ (ինչպէս որ փորձ է կատարուած ամփոփելու, օր.՝ Բ. Ուլուբաբեանի մօտ*[104]*): Կնոջ հետ հեռանալով աշխարհիկ կեանքից՝ Հասան Մեծ Կրօնաւորեալը, իր իսկ վկայութեամբ, իր 6 որդիներին բաժանել էր (թէպէտեւ, ըստ ամենայնի՝ ոչ հաւասարաչափ) իր «գաւառը», «բերդերը» եւ «հողանիթը»: Վերջին եզրոյթն, ի դէպ, Դաւիվանքի վիմագրերին եւ ԺԲ.-ԺԷ. դդ. այլ տարաբնոյթ փաստաթղթերի յանգող (ցաւօք՝ սխալաչատ, տեղ-տեղ խառնակուած ու վատ ընթերցուած բնագրերով) մի ուշ, սակայն ինչ-ինչ ուշագրաւ նիւթեր պարունակող կալուածագրից է, որի պարբերութիւններից մէկում մասնաւորապէս արձանագրուել է. «Ես՝* Հասան*՝ որդի Վախտանկա, եւ եղբայր իմ* Գրիգոր*՝ առաջնորդ ս՚՚բ ուխտիս ըստ*[՞] *Դատէի վանիցս եւ սակս...*[՞] *Սմբատ եւ եղբարքս մեր բաժանեալ տնաք* զՄեծն Խաչէն*...*[՞] *Սակռա եւ երկիրս* Ծար *ի* Վերին Խաչէն *տվաւ Հասանայ, եւ կանգնեցաք խաչ մի Մատաղիսոյ վերն, բոլոր բթին սահման* Խաչենոյ *եւ* Ծարայ*: Ես՝* Հասան *կացի աւաքութեան ամս քառասուն, եւ եղեւ ինձ Զ որդիս, եւ չինեցի Դ* [բնօրինակում գրչական վրիպակով՝ Գ] *բերթս՝ Հաթերքաբերթ, Զիջաբերթ, Հաւախաղացին եւ Դաշտաբերթ: Զբերթերս եւ զգաւառս ետու որդոց իմոց եւ ես եկի ի վանքս՝ մօտ* տէր Գրիգորի *եւ* տէր Աթանէսի [!] *եւ եղէ կրօնաւոր. եւ երկրիս* հողանիթն *այս է՝ Հաթերքոյ գետն ի վեր մինչեւ ի սարն Ապասայ...»*[105]*: Պարզ է, որ Հասան Մեծի «գաւառի», «բերդերի» եւ «հողանիթի» բաժանման արդիւնքում Մեծ կամ Ներքին Խաչէնում (Խօխանաբերդ-*Խաչինաբերդ *կենտրոնով եւ Գանձասարով) հաստատուել է Տանգիկ Վախտանգը, իսկ Վերին Խաչէնում (Հաթերքաբերդ կենտրոնով եւ իշխանապետութեան իրաւունքներով)՝ նրա կրտսեր եւ մօր կողմից խորթ, նոյնանուն եղբայրը: Բայց ինչո՞ւ էր նրանց հայրը վերջինիս եւս կոչել նոյն* Վախտանգ *պապանունով: Թւում է, թէ տուեալ արտառոց փաստը կարող է համադրուել Հաթերքի իշխանապետական նոր կենտրոնի ձեւաւորման բազմանշանակ իրողութեան հետ եւ, թերեւս, մեկնաբանուել Հասան Մեծի երկրորդ ամուսնութեան՝ ոչ այնքան անձնական, որքան ինչ-որ «քաղաքական» ենթատեքստում:*

Արդ՝ վերեւում կատարուած ճշգրտումների շնորհիւ նաեւ պարզ դարձաւ, որ Հասան Կրօնաւորեալը կարող է՝ առաւել մեծ հաւանականութեամբ վերջնականապէս նոյնացուել այն Հասան Գեռաքարեցի (ի-մա՛, ինչպէս իրաւացիօրէն համարւում է՝ Գառնաքար գիւղից՝ անմիջապէս Խօխանաբերդի տակ) Խաչէնի իշխանի հետ, որն,

102 Տե՛ս **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 77-78:

103 Տե՛ս, օր.՝ **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 140. **Է. Լ. Դանիէլեան**, *Գանձասարի պատմութիւն*, էջ 87:

104 **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 123 եւ յետոյ:

105 Տե՛ս **Ս. Քամալեան**, *«Աղուանից աշխարհի» Թադէ կամ Խոթա վանքի կալուածների վերաբերեալ մի դաբալա-կալուածագիր*, - "Кавказ и Византия", вып. 2, Ер., 1980, էջ 153: